


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	
Տարեկան	10 ծր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 ժր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆՏԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ	

Իրանացի սոցիալական երեսակ համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսակ համար 20 սանթիմ կ. երեսակ անկի անգամներու համար 20 ժր զեղը կըլայ :



Նմանակ եւ գրամ զրկե-
կարգութեան

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵԲՇԵՐՈՒ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Գրութիւնք եւ չին տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՇԱԲԱԹՈՒԹԻ 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փետրուար 2ին 201 թիւով կը սկսի «Շարժում»-ի երրորդ տարեշրջանը հետեւեալ պայմաններով. Պուշկարիոյ համար տարեկան 12 ծր. « » Վեցամսեայ 6 » Արտասահմանի համար տարեկան 15 » « » Վեցամսեայ 8 » Ամերիկայի համար տարեկան 3 ժր « » Վեցամսեայ 1.50 » Պուշկարիոյ համար անդի 15 սանթիմ Արտասահմանի » » 20 » Բաժնեգրիները կանխիկ են : Ամէն բաժանորդ իր հասցէին հետ մէկտեղ պէտք է բաժնեգրին զրկէ. ապա թէ ոչ «Շարժում» չի շրկուիր : Մեր գործակալներէն կը խնդրուի հաղորդել մեզ՝ չը վճարող բաժանորդներուն անունները, որպէս զի այդ մարդոց թերթերը դադարեցնենք :

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Շարժում»-ի երկրորդ տարեշրջանը կաւարտի 200 թիւով. մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած, թող բարեհաճին զըրկել իրենց բաժնեգրիները : 201 թիւով պիտի սկսի երրորդ տարեշրջանը. նախորդ տարուան պարտքերը չը վճարողին «Շարժում» չը պիտի շրկուի : Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ բոլոր այն բաժանորդներու և գործակալներու անունները, որոնք խիղճ ունին հայ թերթի մը վարձքը ուտելու :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ազարիա Մոմճեան բնիկ Շապին-Գարահիսարցի, 25 տարեկան երիտասարդ մը, կարճահասակ, նրբակազմ և բարձեւ որ 4—5 տարի է որ այս կողմերը կը գտնուի եղբոր. Կը խնդրենք ազնիւ ընթերցողներէն որ սոյն երիտասարդին վրայ, եթէ տեղեկութիւն մը ունին, հաճին խմբագրութեանս իմացնել :

ԳՈՆԷ ԿԱՅԾԵՐ ՏԻԷՔ

Այնտեղ, մեր հայրենիքում, ուր հայը հո՞ծ բազմութեամբ է ապրում՝ մենք գրեթէ միջոցներ չունենք հայ ժողովրդը և նոր սերունդը մտաորակաբար բարձրացնելու համար եւրոպական կարեւոր թարգմանութիւններ տալ նրա ձեռքը—գիտութեան, արեւտի և ընկերական խնդիրներին մասին :

«Բազմալեզու»-ի և «Հանգէս Ամսօրեայ»-ի մէջ լինում են գիտական բաներ, բայց այդ հանգէսները ժողովուրդը և նոր սերունդը չէ կարգում. թէ ինչո՞ւ, այդ պատասխանը թողնում ենք Մխիթարեաններին և ժողովրդի վրա : Այժմ քանի որ մենք թարմ լուսաւորված երիտասարդներ ունենք, այլևս Մխիթարեաններից ամեն բան սպասելը կատարեալ անխելքութիւն է :

Այդ պարտականութիւնը ընկնում է արտասահմանում, մանաւանդ եւրոպական լուսաւորութեան կեդրոններում ապրող զարգացած հայ երիտասարդութեան վրա :

Մինչեւ օրս միայն Զեյքերիայում ապրողները են թարգմանել մի քանի գրքեր. մեծ մասը յիշատակական ոգով պատկերներ և վիպակներ, և երկու հատ էլ ընկերվարականութեան մասին լուրջ բովանդակութեամբ գրքեր :

Բացի դրանից երկու ամիսէ որ Պարիզում հրատարակվում է «Համալսարան» ամսագիրը, որը նոյնպէս ձգտումը ունի այդ զգալի պակասը լրացնելու :

Մեր ժողովրդի համար անհրաժեշտ բար պէտք են գիտական բոլոր ճիւղերի մասին հանրամատչելի, գրաւիչ և կոկիկ լեզուով գիտական գրուած քննարկները : Մենք բառի բուն նշանակութեամբ գիտականներ չունենք, բայց սակաւ են եղել և մշակողները, ինչպէս շեշտում է «Համալսարան»

հանգէսը, իր երկրորդ համարում :

Մեզ պէտք են այդ մշակները. գոնէ իբր իրանց պարտականութիւնը ըմբռնող թարգմանիչներ : Եւ զարմանալի կըլինի որ եւրոպայում ապրող բաւական բազմաթիւ հայուսանողութիւնը չկարողանար իր միջից արտադրել մի քանի բարեացակամ անհատներ՝ որ գիտութեան վառաչանների մօտ ապրելով, ճիշդ չը թափէին այդ վառարանից գոնէ մի քանի լուսաւոր կայծեր թուցնել մեր խաւարի մէջ թաղված ժողովրդի աչքերը սեւ մթից ազատելու համար :

Մեր ժողովրդին դատարկ թարգմանութիւններով, Ֆրանսական զրական նոյնիսկ ամենաստոր խոհանոցից, շատ են կերակրել : Միմիայն զգայուն շատ բան են տեսել նրա ձեռքը, հիմա վերջապէս ժամանակ է լուրջ կերպով մտածել այդ մասին, և գիտութիւն, ու գիտութիւն տալ : Ու այդ պարտականութիւնը գլխաւորաբար ընկնում է նրանց վրայ որոնք թէ գիտութեան են ներված, թէ յարմարութիւն ունեն և թէ հայկական ընթացիք գործերի ցանցի մէջ չեն խրված :

ՎԱՐԴՈ

ԶԻՆԷ ԳՆԻԱԿՆԵՐԸ

Պատահաբար այցելեցի Պուլկարիոյ... քաղաքը. Իբր այցելու աւագ և առաջին պարտականութիւնս էր բնականաբար զազափար մը կազմել տեղացի հայերուն զպրոցասիրական և եկեղեցասիրական զգացումներուն վրայ. հետեւաբար պէտք էր նախ մտնել վարժարանը, ուր կը դարձնուի հայ միտքը, յետոյ Լուսաւորչի տաճարը, ուր կը սնուցուի հայ հոգին :

Զիննապատ է ամէն կողմ. ձիւնը սակայն դադրած է առտուրէն ի վեր իր սպիտակ հատիկները թափթփելէ : Մաքուր, առողջ, կազդուրիչ օդ մը. ձմեռնային արեւու դողդոջ ճառագայթներ

կը բեկբեկին սառոյցէ ողորկ փայլուն կտորներու վրայ. Գայլերու կուղղեմ գէպի վարժարան, կէս օր է. ժամը մէկը. փոքրիկներ, ապագայ յոյսեր կը վազվզեն հոս ու հոն. կը հետեւիմ իրենց քայլ առ քայլ, ահա հիմա ամէնքս ալ դարձցին պարտեղին մէջ ենք, քառանկիւնի գետին մը հողաչէն պատերով բոլորուն : Մէկ քանիներ կը թողուն յանկարծ իրենց մանկական անմշտունակ խաղիւրը և կը հետաքրքրուին ինձմով, իրենց աչքերուն ծայրերէն շափելով զիս ոտքէս մինչեւ գլուխս. ուրիշներ, բոլորովին անտարբեր, կը շարունակեն եռանդագին իրենց հոր, հորը : Անդին կը նշմարեմ փոքրիկներու խումբ մը, որ շրջանակաձեւ կանգնած, ակնապիշ կը գիտէ իր մեծերուն շինած մէկ գործը : Շրջանակը յանկարծ կը բացուի, երեւան կուգայ ձիւնաչէն մարդու մը կիսարձանը, սեւ պուտեալ յօնքերով, խորափոս աչքերով, խռուած մօրուսով զժոխաղէմ գլուխ մը, ծածկուած ֆէսով մը, որուն ծայրէն կախուած է իբր ծոպ կասկարմիր պղպեղ մը : Տաճիկը, կը գոչեն միաբերան. աշակերտները ամենքն ալ կը վազեն հոն. տեսարանը յուզիչ է. այդ փոքրիկներէն մէկը կուտիւր կը վերցնէ գոչելով, դո՛ւն, դո՛ւն ես Հայաստանի մէջ իմ եղբայրներս ու քոյրերս տանջողը, շարչարողն ու սպաննողը. միւսը՝ ակունները կճրտելով կը ձայնէ. դո՛ւն կը փափաքիս հայութիւնը բնաջինջ ընել, սակայն ո՛չ, չի պիտի հասնիս նպատակիդ : «Դուռներու շարքը կերկարի վրիժառական ձայնարկութիւններով : Տաճիկն է մեր թշնամին, մեր դէմը, գընդակ : Յարձակման նշանը տրուած է. փոքրիկները յանկարծ կը քաշուին և վայրկեանապէս ձիւնէ գնդակները կսկսին տեղալ աջէն ձախէն : Մէկը քիթը կը թուցունէ, միւսը մօրուքը կը տարտնղէ : Գլխուն, գլխուն կը պոռայ, գընդակ գոչողին ձայնն է, որ գոգոցես հրամանատարի շեշտ մը կը կրէ իր մէջ. և ահա գլուխը գի-

դինակն փնտռել, բայց թշուառահանը, գլուխը գալիքը կռահելով, անմիջապէս կծիկը կը քակէ և անյայտ կըլլայ մութին մէջ:

Այս անգամ և ստորին մօլլան՝ որ ժամանակաւ թուրքիոյ մէջ՝ թէ՛ Պօլիս և թէ՛ գաւառները՝ հափիլէի պաշտօն վարած և խիստ շատ անմեղ հայոց արիւնը քամելու անխղճութեան մէջ գըտնուած է եղեր, այժմ լաւաշ ծախելով ու կախարդութիւն ընելով օրապահիկն հայթայթելէ վերջը իր ծովին և արեանը մէջ խառնուած «հափիլէ» թեան նախկին պաշտօնն ալ ցարդ թողած չըլլալով՝ ընաւ առիթ չի փախցունէր այս տեսակ անհիմն զրպարտութիւններով հայոց վարկը կտրել յայս Ռուսիոյ կառավարութեան: Երբ սեղանոյ մէջ գտնուող բոլոր պանդուխտ հայերն միանալով մտադրած են աղերսագիր մը տալ կառավարութեան՝ թուելով անոր մէջ մօլլաի հայոց նկատմամբ ի գործ դրած բոլոր շահատակութիւններն և խնդրելով որ քաղաքէս արտաքսուի քոստ շան մը պէս:

Իսկով մարդասպանին՝ որ ինչպէս ըսի Ալի անուն պարսիկ մըն է, հետեւեալ առաւօտուն կալացի մէջ ձերբակալուած է ոստիկանութեան միջոցաւ և քաղաքը բերուած: Նախնական հարցօքննութեան մը միջոցին Ալի խոստովաներ է թէ ինքն է Իւսիւֆի սպաննիչը հետեւեալ պարագաներու տակ:

Իւսիւֆ և Ալի նախապէս սերտ բարեկամներ եղած ըլլալով՝ սիրային խնդրոյ մը առթիւ կը գփտին իրարու դէմ: Իրենց ոխակալութիւնը այն աստիճանին կը հասնի որ Իւսիւֆ աւելի՛ հուժկու և յաղթանգամ քան զմին՝ մի անգամ կը ձեռնէ և երկու անգամ ալ գանակով կը վիրաւորէ Ալին և այս պատճառաւ անգամ մը 11 ամիս և ուրիշ անգամ մը 9 բանտարկուած է և ծանօթ ոստիկանութեան Արգ՝ Ալի տեսնելով ու համոզուելով որ անկասկածօրէն օր մը մահացու կերպով պիտի զարնուի Իւսիւֆէն, յարմար առիթը կորոնէ և արդարեւ կը գտնէ ու կը զարնէ զայն արդարութիւնը ինք իր ձեռքով տեղը տանելով:

Այժմ Պուլկարի մէջ է, բայց կը յուսացուի որ մէկ տարուան բանտարկութեան դատապարտուելով ազատի:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ ԶԱՅԱՎԱՅՆ ԿԱՄ ԶԱՒԱՎԱՅՈՑ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի վառնա, Ա. Զարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարգացական եւ վիպական գրքեր. գրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյմ. Գնուած եւ վաճառուած ամէն տեսակ գործածուած նամակագրոյմներու:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գերմանիոյ թերթերը կը ծանուցանեն թէ Գերմանիոյ մէջ հռչակուած հայ երաժիշտ Տիրան Ալիքսանեան մարտ ամսին օրինորդի մը հետ Պօլիս պիտի երթայ նուագահանդէս մը տալու համար:

— Նպաստից յանձնաժողովը գրամ չունի և ստիպուած գաւառներէն օգնութեան համար եղած դիմումներու բացասական պատասխան կուտայ: Այս պարագաները աչքի առաջ ունենալով՝ նպաստից յանձնաժողովը որոշած է տեղեկագիր մը ներկայացնել Խառն ժողովոյ, որուն մէջ պիտի բացատրուի թէ՛ ի՞նչ միջոցներ կարելոր են, կարտութիւնները դարմանելու և գոնէ մասամբ վերջ տալու պահանջուած անվերջ նպաստներուն: Կրօն. ժողովը իր նիստերէն մէկուն մէջ նկատողութեան առած է ամուսնական դատերու վերաբերեալ Գատաստանական Խորհրդոյ մատուցուած 5 տեղեկագիրները և որոշած հարկ եղած որոշումները տալ:

— Լ'Արմէնի կը հաղորդէ որ Աթէնքի «Միութիւն» թերթը առաջարկած է որ Բարիկի մէջ ժողուին յեղափոխական կուսակցութիւններու պատգամաւորներ, ժողով մը կազմեն Մինաս Զերազի նախագահութեամբ և համաձայնութեան մը հանգին: Զերազ կընդունի այդ առաջարկը:

— Պուլկարիոյ այցելու հովիւ Պաղճեան Վարդապետ հինգշաբթի օրը այցելեց ազգային երկսեռ վարժարանները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Յունվար 20ին Պօլսէն կը հեռագրեն թէ՛ Ֆրանսական փոստային հասցեով զրկուած պայուսակ մը, որու մէջ կը գըտնուին եղեր ապահովագրուած նամակներ, շոգեկառքի մէջ բացուած է. Պոլսոյ քանի մը պանքաներու ուղղուած նամակները բացուած և անոնց մէջէն գուրօնները գողցուած են: Գեռ եւս գողցուած գումարի քանակը և պայուսակին ուրտեղ բացուած ըլլալը յայտնի չէ:

— Պօլսէն եկած յունվար 23ին մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք թէ Բերայի մէջ մեծ հրդեհ մը տեղի ունեցեր է պայրամի երրորդ օրը: Հրդեհը սկսած է Սպլանտիտէն՝ օգային կազին տէրօյին պայթելովը. այրուեր են հայոց Ս. Երրորդութեան եկեղեցին, կաթողիկոսութեան պատրիարքարանը և Աստուածածին եկեղեցին, Լիւքսէմպուրիլը, յունաց Զարին գըզլորոցը որու մէջ գտնուած աշակերտուհիներէն ութը այրուեր են: Վերջապէս Բերայի մեծ պողո-

տան անճանաչ վիճակի մէջ կը գտնուի եղեր:

Այս լուրը ստուգութեան կը կարօտի:

— Ռուս կառավարութիւնը ոչ միայն կը վախայ ուսանողներէն և գործաւորներէն, այլ և մանկահասակ աշակերտներէն:

Ոստիկանութիւնը յունվարի 6ին Վարսովիայի մէջ (Լեհաստան) մօտ 40 աշակերտ ձերբակալած է: Այդ տմարդի վարմունքի գրգռիչ պատճառները յայտնի չեն: Արդեօք այդ մանուկները վտանգ կսպառնային կայսրութեան և Նիքօլա երկրորդի գոյութեանը:

— Անցեալ տարուան մէջ Ռուսական զբառնութիւնը մեծ գործունէութիւն ցոյց տուած է Ֆինլանտիոյ մէջ: Զորս լրագիրներու բոլորովին արգելուեր են. իսկ 17ը գատապարտուած են քանի մը ամսով:

— «Թայմզ» թէհրանի թըլթակիցը կը հաղորդէ թէ՛ հասանական է որ Պարսկաստանը Ռուսիայէն ըրած փոխառութեանը փոխարէն՝ Ռուսիոյ պիտի արտօնէ երկաթուղի շինել հիւսիսային և միջին Պարսկաստանի մէջ: Ռուսիա անշուշտ թոյլուութիւն պիտի ստանայ Սէխստանի մէջէն զօրք անցընել:

— Նոյն թերթը կը ծանուցանէ թէ՛ Պաքուէն Եւրոպա ուղղեալ հեռագիրները առժամանակեայ կերպով կանգնեցուցած են, որովհետեւ Ռուսիան մեծ քանակութեամբ զօրքեր կը տեղափոխէ դէպի Աֆղանական սահմանագլուխը:

— Աւստրիոյ մէջ հիմա ալ տասնեակ հազարներով բանտարաններ գործադուլ ըրած են: Այդ բազմացեղ պետութեան մէջ եղած աչգայնական գփտութիւնները արդէն բաւական շուարեցուցած էին ծերունի Թրանձ Ժօզէֆը, և նախարարութիւններու արագ փոփոխութիւնները սովորական էին դարձած: Հիմա ալ աւելի վտանգաւոր տարրը՝ գործաւորները գլուխ կը բարձրացնեն: Ի՞նչ պիտի ըլլայ արդեօք Աւստրիոյ վիճակը այսուհետեւ:

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱՅՆ ԵՒ ԱՎԱՃԱՌԱՆՈՑ Թիւ 389 Իսկիզի-պաշի

Կը վաճառուի ծրայտոտ, բոսթալի եւ աղերսագրի ամէն տեսակ բուլբու նաեւ զանազան տեսակ սիկարնիեր: 9½ Թուականին հրապարակ ելած Պուլկարիոյ գահաժառանգ Պօլիսի պատկերազարդ քառթ-փոթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում»:
Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան զիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԼ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, Յունվար 29, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Երգման Զոհը» արամ-գօմէտի 4 արար:

Խիստ ծիծաղաշարժ դաւեշտ մը:

Վաղը կիրակի գիշեր, Յունվար 30, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ «Համբերութիւն» կամ «Սէր առանց համարման» արամ-գօմէտի 5 արար:

Խիստ ծիծաղաշարժ դաւեշտ մը:

Յառաջիկայ երեքշաբթի գիշեր, Փետրվար 1, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Ալեքիոյ պատերազմը» կամ «Արապ մուրացկանը» թատերգութիւն 6 արար:

Ծիծաղաշարժ դաւեշտ մը:

ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ

Տ. ԹԻՒՖԷՆԿՅԱՆԻ

Մուսայրի Թաղապետական պարտեզին ղիւնաց, Ասիական Անկի Սալօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՃՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցեւորման, նամակագրութեան, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւռներ:

Գիշերը յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:
ՍԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԻԿ

ՊՕՐՍԱ

Վառնա 28 Յունվար

Վազօն	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	53—57	9.50—10.60
ՄԻՍԻՐ	54—56	5.90—6.20
ԱՐԲԱ	—	—
ԵՌԻՒԱՅ	—	—
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55—60	9.50—11.20
ԱՐԲԱ	38—446	.50—7.40
ԵՌԻՒԱՅ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—57	6—7
ՏԱՐԸ	55—58	5.50—60
ՖԱՍՈՒԼԵԱ	100 ֆր	12—20

Հէր կիւն կէլէն մալ	ՊՈՒՂՏԱՅ	Առապա
—	—	—
—	—	—
—	—	—
—	—	—
—	—	—

Առապա մուամէլէսի Նարօլէոն 22.40 ֆրանք հիսապը իլէ տիր:

Печатница „Взаимность“ Варна